

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի  
«Ուրարտու» համալսարանի ռեկտոր

հ.գ.դ., պրոֆեսոր Ն. ԱՄԵՂՐԱԿՅԱՆ

10, 01.2024թ.



**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ**

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԺԹ.00.03 - «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեմայով ատենախոսության:

Արմեն Սամվելի Ավետիսյանի թեկնածուական ատենախոսությունը ներառում է սոցիալական հոգեբանության ոլորտում կարևոր հիմնախնդիր՝ շեշտադրելով նաև անձի տարիքային, անհատական, հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև անձի սոցիալական դիրքը, դերակատարումը՝ որպես կոնկրետ սոցիալական խմբի անդամ:

Այդ տեսանկյունից խիստ կարևորվում է անձի վրա ապատեղեկատվության քայքայիչ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման խնդիրը ժամանակակից գիտության համար: Ժամանակակից աշխարհում համացանցը տեղեկատվության ձեռքբերման ամենահիմնական աղբյուրն է, հետևաբար՝ տարբեր տարիքային և սոցիալական խմբերի վրա տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների, համացանցի բացասական ազդեցությունը լինում է տարաբնույթ:

Թեմայի արդիականությունն անմիջականորեն պայմանավորված է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմաններում ապատեղեկատվության, դրա քայքայիչ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելման, հիշյալ գործընթացներում ուսանող երիտասարդների

տեղեկատվական անվտանգային կարողությունների ձևավորման, զարգացման, անձնային որակների, հոգեկան կայունության, ինքնակառավարման, ինքնավստահության, հույզերի կառավարման, իրազեկվածության, մեղիագրագիտության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության ներածությունն ունի հստակ կառուցվածք, պատկերացում է տալիս հետազոտության տրամաբանության, ընտրակազմի, մեթոդների վերաբերյալ:

Ներածական մասում ներկայացված է ուսումնասիրվող հիմնախնդիրը, դրա տեսական և գործնական նշանակությունը, հստակ ձևակերպված է վարկածը, աշխատանքի նպատակը, խնդիրները, գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության երեք գլուխները միմյանց լրացնելով կազմում են մեկ տրամաբանական ամբողջություն: Հեղինակին հաջողվել է մանրակրկիտ տեսական վերլուծության միջոցով հիմնավորել առաջ քաշված վարկածը՝ ուսումնասիրելով բազմաձևավալ գրականություն:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 137 էջ (առանց հավելվածների), աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

Ատենախոսության 1-ին գլխում հեղինակը ներկայացրել է տեղեկատվության սոցիալ-հոգեբանական ազդեցության հիմնախնդիրը: Անրադարձ է կատարվել ուսանողների վրա ապատեղեկատվության քայքայիչ ազդեցության կանխարգելման ժամանակակից սոցիալ-հոգեբանական մոտեցումներին, ինչպես նաև անձի և խմբի վրա ոչ հավաստի տեղեկատվության քայքայիչ ազդեցության մեխանիզմներին և համացանցի սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության հետևանքներին՝ ուսանողի վարքագծում:

I գլխի 1-ին ենթագլխում ատենախոսը մանրակրկիտ կերպով վերլուծել է ուսանող երիտասարդների վրա համացանցի ուղղակի և անուղղակի ազդեցության, տեղեկատվական հիմնախնդրի հոգեբանական անվտանգության առանձնահատկությունները: Անդրադարձ է կատարել նաև ապատեղեկատվության՝ ուսանողների վրա սոցիալ-հոգեբանական քայքայիչ և՛ ուղղակի, և՛ անուղղակի

ազդեցությանը, տարբեր գիտական շրջանակներում մշակվող ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության կանխարգելման ռազմավարություններին:

Ատենախոսն այս առումով ներկայացնում է սեփական տեսակետն առ այն, որ առկա ռազմավարությունների իրարամերժության մեջ առաջնային է ուսանող երիտասարդի սոցիալականացման հաջողությունը և այն ապահովող, հնարավոր վտանգները կանխարգելող ռազմավարությունների կիրառումը, հասարակության մեջ ինքնիրացվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

I գլխի 2-րդ ենթաբաժնում ատենախոսը ոչ հավաստի տեղեկատվության տարածումը ներկայացնում է որպես սոցիալ-հոգեբանական բազմաշերտ երևույթ, որն ազդելով անձի վրա, ձևավորում, ձևափոխում է խմբային, հասարակական երևույթներ՝ հանրային կարծիք, տրամադրություններ, դիրքորոշումներ և այն, և հետևաբար էլնելով վերոնշյալից, եզրահանգում է, որ հատկապես հետպատերազմյան Հայաստանում առավել ևս կարևորվում է տեղեկատվական-հոգեբանական բացասական ազդեցություններին դիմագրավելու հիմնախնդիրը: Վերոնշյալ ենթազլխում ատենախոսը շատ կարևոր հեղինակային տեսակետն է հիմնավորում, համաձայն որի ՀՀ-ն այսօր շարունակում է գտնվել հիբրիդային պատերազմի իրավիճակում և հետևաբար, ապատեղեկատվության տարածման և հասարակական գիտակցության տրամադրությունների քայքայիչ սոցիալ-հոգեբանական կանխարգելումը մնում է ազգային անվտանգության առաջնահերթություններից մեկը:

I գլխի 3-րդ ենթազլխում ատենախոսը վերլուծելով անձի վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության ձևերը, անդրադարձել է նաև համացանցում անցկացնելու ժամանակահատվածի և անձի վրա վերջինիս ազդեցության կապին, դրա բացասական հետևանքներին՝ տազնապայնություն, սթրես, նյարդայնություն, միջանձնային հարաբերությունների բարդացում, ակտիվ գործունեության թուլացում:

Հատկապես առանձնացվել է ուսանողական հանրույթն այդ առումով.

ա) ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության նվազում, բ) հետևաբար՝ նաև ուսումնական գործընթացի որակի նվազում, գ) շփման հաճախականության նվազում, դ) երիտասարդի սոցիալականացման համար կարևոր՝ սոցիալական այլ խմբերում

ընդգրկվելու, որոշակի դիրք ունենալու, համապատասխան դերեր ստանձնելու կարողությունների նվազում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն, որ ատենախոսը սոցիալական հոգեբանության արդի այս հիմնախնդրի հրատապությունն ընդգծել է ոչ միայն անդրադառնալով առաջացման պատճառներին և հետևանքներին, այլ նաև ներկայացրել է կանխարգելման բազմաձևավալ մոտեցումների սեփական մեխանիզմները:

Ներկայացվող հիմնախնդրի ցանկացած պատճառ բազմակողմանի վերլուծության ենթարկելու միջոցով՝ միաժամանակ փորձ է արվել դրանք ճկուն ուղղորդմամբ կանխարգելման ուղիներ մշակել: Ատենախոսն անդրադարձել է նաև քայքայիչ ազդեցության առավել բացասական սոցիալ-հոգեբանական հետևանքներին, երբ ուսանող երիտասարդն ընդգրկվելով ոչ առողջ վիրտուալ խմբում, սկսում է այդ խումբն ընկալել որպես ռեֆերենտային, հետևաբար՝ մյուս հարաբերություններում և շփումներում առաջնորդվում է այդ խմբում ընդունված նորմերով, արժեքներով, դրանցով է կողմնորոշվում և գնահատում իրողությունները:

Տեսական վերլուծություններն ամփոփելով, ատենախոսն ամփոփ ներկայացնում է մոտեցումներ, որոնք արժեքավոր ենք համարում՝ հաշվի առնելով թեմայի հրատապությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կատարված ծավալուն հետազոտությունը ոչ միայն կլրացնի ոլորտի բացը, այլ նաև կարող է հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության 2-րդ գլխում ներկայացվել է ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության փորձարարական հետազոտությունը: Հետազոտության առաջին ենթաբաժնում ներկայացված են աշխատանքի կազմակերպման և մեթոդների նկարագրությունը, երկրորդ ենթաբաժնում՝ սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության վերաբերյալ հետազոտության արդյունքները և վերլուծությունը (հավաստող գիտափորձ):

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է երեք փուլով - I փուլում հետազոտությանը մասնակցել են 200 ուսանող և առանձնացվել են այն ուսանողները, որոնց մոտ նկատվել է ապատեղեկատվության ազդեցության հակվածության բարձր ցուցանիշ: II փուլում առանձնացվել են ուսանողների երկու համեմատական խմբեր,

որոնց մոտ ուսումնասիրվել են անձնային, հուզական ոլորտի մի շարք առանձնահատկություններ և նրանց համացանցային կախվածությունը: III փուլում մշակվել և փորձարկվել է առաջին խմբի ուսանողների շրջանում թրեյնինգ-դասընթաց ուղղված ապատեղեկատվության ազդեցությունների կանխարգելման կարողությունների ձևավորմանը, ապա՝ իրականացվել է ռեֆեստավորում:

Կիրառվել են՝ հեղինակային հարցաթերթ, կոնտենտ վերլուծություն, մի շարք մեթոդիկաներ (Ռ. Քեթթելի "Անձի բազմազործոն ուսումնասիրման", Ա.Բասսի և Ա. Դարկի "Ազդեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման", Չ.Սպիրբերգերի և Յու. Հանինի "Տագնապայնության ինքնզնահատման", Վ.Ստոլինի և Ս. Պանտիլեևի "Ինքնավերաբերմունքի ուսումնասիրության", Կիմբերլի-Յանգի "Համացանցային կախվածության" մեթոդիկաները): Ատենախոսը կատարել է խորքային փորձարարական աշխատանք՝ համապատասխանաբար արդյունքները ներկայացնելով գծապատկերների, աղյուսակների միջոցով:

Հարկ է նշել, որ փորձարարական հետազոտությունը կառուցված է պատճառահետևանքային կապերի վերհանման, դրանց միջոցով փոխկապվածությունների բացահայտման, հետևաբար նաև՝ հիմնավորված արդյունքների հստակ հաջորդականությամբ: Վերոնշյալից հետևում է, որ ենթադրվող վարկածը և առաջադրված դրույթները բազմակողմանի, տրամաբանական փոխկապվածության մեջ գիտական արժևորում են ձեռք բերում:

3-րդ գլխում ատենախոսը ներկայացրել է ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության կանխարգելման ուղիները և միջոցները: Վերոնշյալ գլխի առաջին ենթաբաժնում անդրադարձ է կատարվել ուսանող երիտասարդների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության կանխարգելման ուղիներին, երկրորդում ներկայացված է «հոգեբանական պարտաստություն և մեղիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրեյնինգ-դասընթացի առարկայական նկարագիրը (ձևավորող գիտափորձ), երրորդում՝ ուսանող երիտասարդների անձնային առանձնահատկությունների և սոցիալ-հոգեբանական պատրաստվածության, մեղիագրագիտության ռեֆեստավորման արդյունքները (ստուգիչ գիտափորձ):

Ատենախոսը փորձարարական բաժինն ամբողջացրել է ուսանող երիտասարդների վրա ոչ հավաստի տեղեկատվության սոցիալ-հոգեբանական քայքայիչ ազդեցության կանխարգելման ուղիների ռազմավարական ծրագրով՝ «Հոգեբանական պատրաստություն և մեղիագրագիտություն» թրեյնինգ- դասընթացի շրջանակներում: Կատարվել է ձևավորող գիտափորձ, որի շրջանակներում դասընթացի ավարտից հետո իրականացվել է դասընթացին մասնակցած 110 ուսանողների վերաթեստավորում:

Ատենախոսի կողմից մշակված և փորձարկված «Հոգեբանական պատրաստություն և մեղիագրագիտություն» թրեյնինգ- դասընթացից հետո ռեթեստավորման արդյունքների համաձայն ուսանողների մոտ հնարավոր է եղել ձևավորել ա) տեղեկատվության հավաստիությունը օբյեկտիվ գնահատելու կարողություն, բ) ինքնակառավարում, գ) համագործակցություն, դ) տազնապների նվազեցման կարողություն:

Ատենախոսության եզրակացություններն արտացոլում են հետազոտության արդյունքները: Խորը և բազմաբնույթ վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է լուծել առաջադրված հիմնական խնդիրները և հանգել կոնկրետ, հստակ եզրակացությունների, որոնք ներկայացնում են ատենախոսության պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթների պահանջները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և արտացոլում է հիմնական բովանդակությանը:

Կատարվել է ծավալուն բազմաբովանդակ հետազոտություն, որն անշուշտ կհարստացնի տեղեկատվական սոցիալ-հոգեբանական ազդեցության ոլորտը:

Ամփոփելով, կարելի է ընդհանրացնել, որ կատարված աշխատանքը կարող է լրացնել ոլորտի բացը և հիմք հանդիսանալ հետագայում նմանատիպ հետազոտություններ անցկացնելու համար՝ ոչ միայն բուհական համակազմի, այլ նաև միջին մասնագիտական հաստատությունների, ավագ դպրոցների սովորողների հետ: Աշխատանքը կարող է նաև խթան հանդիսանալ ապատեղեկատվության քայքայիչ սոցիալ-հոգեբանական ազդեցության կանխարգելմանը նպաստող հետազոտություններ կազմակերպելու համար և անշուշտ կհարստացնի սոցիալական հոգեբանության

կիրառական ոլորտը: Միևնույն ժամանակ աշխատանքը գերծ չէ որոշ անճշտություններից և թերություններից.

1. Աշխատանքն առավել կշահեր, եթե փորձարարական հետազոտությունները կատարվեին ոչ թե մեկ բուհ-ի (տվյալ դեպքում՝ մանկավարժական համալսարանի), այլ մի քանի բուհ-երի և տարբեր մասնագիտություններ ուսանող երիտասարդների հետ: Հետաքրքրական կլիներ նաև թվային տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտացող երիտասաղների հետազոտական համեմատական վերլուծությունը՝ այլ ոլորտի ուսանողների հետ:
2. Ատենախոսության 3-րդ և 4-րդ խնդիրները կարելի էր ընդգրկուն ներկայացնել մեկ խնդրի շրջանակներում:
3. Փորձարարական բաժնում ռեթեստավորման արդյունքների ամփոփ ներկայացումից հետո կարելի էր համեմատական գծապատկերով ներկայացնել նաև գիտափորձից առաջ և հետո արձանագրված տվյալները՝ առավել ցայտուն կերպով ընդգծելու համար ստացված արդյունքների տարբերությունը և համեմատական վերլուծությունը (առավել ևս, որ փորձարարական բաժինը հարուստ է կիրառված մեթոդիկաների հստակ վերլուծականներով և գծապատկերներով):
4. Առաջարկվում է հետագա հետազոտությունների շրջանակներում հաշվի առնել նաև ազգային բնութագրին բնորոշ առանձնահատկությունները և դրանց ազդեցությունն այս համատեքստում: Մասնավորապես, բարձր գնահատելով ատենախոսի կողմից մշակված կանխարգելման ծրագիրը (գլուխ 3.2), կարծում ենք, որ հետագայում կարելի է այն խորացնել՝ ապատեղեկատվության և հայ ազգաբնակչության սոցիալական սպասումների փոխադարձ կապի տեսանկյունից (հատկապես, որ ատենախոսը կարևորել է ապատեղեկատվության կանխարգելման հիմնախնդիրը հետապտերազմյան, ժամանակակից հիբրիդային պատերազմի համատեքստում):

5. Աշխատանքի վերնագրում և հետևաբար նաև ողջ աշխատանքում առկա “դեստրուկտիվ” բառը, ըստ մեզ, կարելի էր փոխարինել հայերեն “քայքայիչ” կամ “կործանարար” բառերով: Աշխատանքում առկա են նաև այլ օտարալեզու, միջազգային կիրառման բառեր, որոնք ունեն նաև իմաստն ամբողջովին արտահայտող հայերեն տարբերակներ տես՝ (էջ 25 (էմոցիոնալ), էջ 25 (ակտուալ), էջ 50 (ադապտացվել), էջ 51 (կոմպետետություն), էջ 72 (ինֆորմացիա) – համապատասխանաբար հուզական, արդի, տեղայնացվել, ձեռնահասություն, տեղեկատվություն):

Նշված անճշտությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, ատենախոսությունը կատարված է գիտական բարձր մակարդակով, ունի տեսական և գործնական նշանակություն: Այն ունի ինքնին ավարտուն տեսք, շարադրված է զրազետ, գիտական ոճով, պահպանված է ուսումնասիրված նյութերի տրամաբանական կապը, հստակ ներկայացված են հետազոտության արդյունքները:

#### Եզրակացություն

Գնահատելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը, կարելի է հավաստել, որ Արմեն Սամվելի Ավետիսյանի «ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական ուսումնասիրություն է, այն կարող է հարստացնել սոցիալական հոգեբանության կիրառական ոլորտը՝ դեռևս չուսումնասիրված հիմնախնդիրների հետազոտ հետազոտման համար առաջատար և խթան հանդիսանալով: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԺԹ.00.03-«Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի շնորհմանը ԺԹ.00.03- «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի ընդլայնված նիստում՝ 09.01.2024թ. (արձանագրություն թիվ 4/24), որին մասնակցել են՝ հ.գ.դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Սեդրակյանը, հ.գ. դոկտոր, պրոֆեսոր Ռ.Մ.Նաղդյանը, ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., դոցենտ Հ.Լ.Պետրոսյանը, հ.գ.թ.,դոցենտ Ա.Ա.Նաղդյանը, հ.գ.թ. Հ.Լ.Կիրակոսյանը, հ.գ.թ. Ս.Զ.Վարդանյանը, հ.գ.թ. Ա.Ռ.Մուրադյանը, հ.գ.թ. Լ.Գ.Մելիքյանը, պ.գ.թ.,դոցենտ Ս.Ա.Աբրահամյանը, մ.գ.թ.Մ.Մ.Գևորգյանը, փ.գ.թ. Ա.Ռ.Մկրտչյանը, Ջ.Ս.Բաղդասարյանը, Ա.Ռ.Խաչատրյանը, Մ.Պ.Թոզալաքյանը, Ա.Գ.Եղիյանը, Ս.Վ.Մովսիսյանը:

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ.,դոցենտ

*P. Sedrakyan* Հ.Լ.Պետրոսյան  


Հաստատում եմ՝ հ.գ.թ., դոցենտ Հ.Լ.Պետրոսյանի ստորագրությունը

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի գիտական քարտուղար՝ ԲԺ.Գ.Դ.

*B. G. D.* Բ.Ռ.Բաբայան  


«10», «հունվար» 2024թ.